Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1807714696 որոշումը անփոփոխ, իսկ գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<<07>> 05 2018թ. 17-4-40716-18/17-4-6044

ք.Երևան

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գեղապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Գարիկ Խաչատրյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Գարիկ Խաչատրյանը 40716-18 դիմումով խնդրել է ճանապարհային ոստիկանության թիվ 1807714696 որոշումով ամրագրված իրավախախտումը վերահասցեագրել իրեն:

Քաղաքացի Գարիկ Խաչատրյանի դիմումի հիման վրա Ճանապարհային ոստիկանությունում հարուցվել է վարչական վարույթ, իրականացվել գործի քննություն, որի շրջանակներում վերը նշված որոշումներով արձանագրված խախտումները Գարիկ Խաչատրյանի կողմից կատարված լինելու փաստը հաստատող լրացուցիչ ապացույցներ ձեռք բերելու նպատակով, վերջինս ծանուցվել է գործի քննությանը մասնակցելու համար, սակայն չի ներկայացել, իսկ միայն դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը չեն կարող հիմնավոր ապացույց հանդիսանալ փաստը հաստատված համարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1807714696 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատն՝ առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակներն ուղարկել Գարիկ Խաչատրյանին (հասցեն՝ Կոտայքի մարզ, Աբովյան, Հատիսի 8 շ., բն. 44), ակտերի հասցեատեր Ալբերտ Սարգսյանին (հասցեն՝ ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., շ. 46, բն. 22) և ՏՄՀԽԱ կենտրոն:

Ե.Կարապետյան